ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է իրականացվեն հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթներում ներառվող առողջապահական ծառայությունների և նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակում/վերանայում, ինչպես նաև դրանց հաշվարկում:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է ապահովագրական փաթեթի, դրանում ներառվող ծառայությունների առանձին բաղադրիչների ծախսերի գնահատում համապատասխան մասնագետի ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով առողջապահական տվյալների վերլուծության իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրմամբ պայմանավորված հիմնական ծառայությունների փաթեթը նկարագրող փաստաթղթերի մշակման ընթացքում կլինիկական տվյալների՝ ախտորոշումների, դրանց սահմանումների և ծառայությունների հետ նույնականացման խորհրդատվություն, այդ թվում

1. Առողջապահության նախարարության խորհրդատուների, մասնագիտացված ասոցիացիաների, մասնագիտացված բժշկական կենտրոնների կողմից ներկայացված ապահովագրական հիմնական ծառայությունների փաթեթում ներառված ծառայությունների բաշխում ըստ բժշկական օգնության տեսակների, ախտորոշման խմբերի:

2. Փաթեթի հաստատված կառուցվածքին համապատասխան ախտորոշումների՝ հիվանդությունների և վիճակների և դրանց դեպքում տրամադրվող ծառայությունների ցանկերի համադրում բաց աղբյուրներում առկա տեղեկատվության հետ, այդ թվում ԱՆ կողմից հաստատված գործելակարգերի, կլինիկական ուղեցույցների հետ:
3. Փաթեթում ներառվող ծառայությունների շրջանակներում կատարվող դեղերի, բժշկական նշանակության ապրանքների, լաբորատոր և գործիքային հետազոտությունների, բժշկական խորհրդատվության և այլ բժշկական միջամտությունների հետ կապված ծախսերի, դրանց վիճակագրական ընդունելի նորմերի համադրում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ ամսեկան հաշվետվություններ աշխատանքի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվության համադրումների, դրանց մեկնաբանությունների ամփոփ տեղեկատվության պարբերական փոխանցում փորձագիտական խմբի համակարգողին:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետն ըստ անհրաժեշտության, կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, որտեղ պետք է նկարագրվեն առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները, ինչպես նաև պետք է ներկայացնի դրանք ըստ անհրաժեշտության:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն առողջապահության բնագավառում:
- Ավելի քան 5 տարվա փորձ առողջապահական տվյալների կառավարման, բժշկական կամ այլ տիպի տեղեկատվության համակարգման և վերահսկման փորձառություն,

- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ պետական կառավարման մարմինների հետ աշխատելու կամ բժշկական կազմակերպությունում աշխատելու փորձ,
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: